Դանիել Վարուժան

Կալեր

Կալերու մեջ ես կը նըստիմ իմ երազուն
Հովանիին տակ էշիս՝
Որ քովս սա կոճղին կապած՝ կը շըփե
Աղու ծընոտը ուսիս:

Տափաստանին վըրա, խաղաղ, կը փըռվի
Ճերմակ ալիք մ՚արևու՝
Որուն մեջ լյուղ կու գան դեզերն, և կըրիան
Եկեր է հոն տաքնալու:

Թևը հովին, ծանրացած գաղջ բույրերով,
Հազիվ ծույլ ծույլ կը շարժի:
Կովին ըստվերը փառահեղ լույսին վրա՝
Սև կարկըտան մ'է լայնշի:

Շինականն իր կահն ու կազմածը բերած՝
Հոն հիմներ է նո՛ր գյուղակ…
Հեռուն՝ լըքված իր մամռապատ շեմին վրա
Կը հըսկե գամփռը մինակ:

Կալերուն մեջ դեզը՝ ծեփված արևով՝
Կարծես տընակ մ'է ոսկի:
Տերևախիտ ծառին զով շուքը կ՚ըլլա

Առագաստ մը նոր հարսի:

Ու ես նրստած հովանիին տակ էշիս
Կ՚երգեմ քաջերը հողին՝
Որոնք մանգաղն հազիվ կախած պատն ի վար՝
Կը կրրթեն ցուլը՝ կամին:

Կ՚երգեմ հոտաղն՝ որ կը հարթե կալատեղ
Լողքարի՛ն գինքը լրծած,
Մինչ քրրտինքով կը թրրջրվի շապիկն իր
Կուրծքին վրրա՝ պատրոտած:

Կ՚երգեմ հարսերն՝ որ հինան դեռ մատերնուն՝
Կը մաղեն ժիր ժիր գարի.
Կը թափթրփին իրենց մաղին ծակերեն
Կարծես շիթեր գոհարի:

Կ՚երգեմ մշակներն՝ որ սայլերուն կատարին
Աստվածներու պես կանգուն՝
Երկժանիով կատաղորեն կը քանդեն
Ճակատն հրսկա դեզերուն:

Կա՜մը կ՚երգեմ՝ որ կը նավե շուրջն հունձքին
Իբրև հրագույն լիճի վրա,
Հետո ցորե՜ն աշխարհածուփ՝ որ արդեն
Հարդերուն մեջ կը լողա:

Օ՛, ի՜նչ քաղցր է երթալ խառնվիլ էությամբ
Այդ սրրբագույն վաստակին.
Տրրեխներեդ մինչև մազերդ համակվիլ
Մրրեղներուն մեջ դեզին:

Փուռի կայծի՜ն, դաշտի հացի՜ն ի խնդիր

Ըլլալ Պա՛նը կալերուն,
Վերադարձնել ջաղացքներուն սրրտին մեջ
Իրենց երգերը անհուն: